# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ

Գ. Արզական Բաբաջանյան փ,թիվ-3,
հեռ 022662468
anna-gevorgyan-68@mail.ru
24փետրվարի.2015թ.
ելից-07

*<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով*
*շրջանակային համաձայնագրերի միջոցով*
*գնում կատարելու ընթացակարգի*
*հնարավոր մասնակիցների ղեկավարներին*

*Հարգելի՛ Մասնակից,*

*<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Կոտայքի մարզի Արզական գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:*

*Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում << ԿՄ- ԱԳՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>>:*

*Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Կոտայքի մարզ, գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 հասցեով, մինչև 2015թ. մարտի 06-ը, ժամը 1500-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գրանցամատյանի վարման պատասխանատու է. Աբրահամյանը: Հայտերը գրանցամատյանի վարման պատասխանատուի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:*

*Հայտերը կբացվեն Կոտայքի մարզի Արզական գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքում, Կոտայքի մարզ, գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 հասցեով, 2015 թվականի մարտի 06-ին, ժամը 1500-ին:*

*Գնման առարկա է հանդիսանում Կոտայքի մարզի Արզական գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը:*

*Կոտայքի մարզի Արզական գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1-53 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 Հավելվածում:*

*Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝*

*ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում, պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,*

*բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*

*Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:*

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

*Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:*

*Կոտայքի մարզի Արզական գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumnerlusavan@mail.ru:*

*Հարգանքներով՝*

*ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ*